ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, **Երևան**, **Վ. Սարգսյան** 3, **Կառավարական տուն** 2, **Հեռ.**/Тел./Tel.: +374 10 59 96 00, **ֆաքս**/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.gov.am

N 02/22/28448-2026

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ նախագահ,

mediaforedu.am **կայքի խմբագիր**

ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

էլ. փոստ՝ mediaforeducation.ngo@gmail.com

Ի պատասխան Ձեր՝ 06.08.2026 թ. ՀՀ վարչապետի աշխատակազմ և ԿԳՄՍ նախարարություն ուղղված հարցման

Հարգելի՛ Անուշ Մարտիրոսյան,

1.Հանրակրթության որակի գնահատումը և կրթության ոլորտում կատարվող պետական ներդրումների արդյունավետության գնահատումն իրականացվում են մի շարք գործոնների և արդյունքների հիման վրա՝ այդ թվում սովորողների ուսումնառության արդյունքների արտաքին և ներքին գնահատումներ, ամփոփիչ ատեստավորման արդյունքներ, հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների ապահովման աստիճան, ուսուցիչների մասնագիտական կարողությունների ցուցանիշներ, բուհերի ընդունելության քննության արդյունքներ և այլ տվյալներ:

«Հանրակրթության մասին» օրենքով, մասնավորապես, նախատեսված է ուսումնական հաստատության արտաքին գնահատում, որն իրականացվում է մատուցվող կրթական ծառայությունների որակի և հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին շրջանավարտների համապատասխանության հիման վրա: Միաժամանակ, ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը կրթության ֆինանսավորումը դիտարկում է որպես մարդկային կապիտալի զարգացման ներդրում և նախատեսում է կրթական համակարգի զարգացման արդյունքների մշտադիտարկում և հանրությանը դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

Կրթության արդյունքները ձևավորվում են երկարաժամկետ ազդեցությունների ներքո. OECD-ի PISA 2022 զեկույցը փաստում է, որ կրթական քաղաքականության կարևոր բարեփոխումների ազդեցությունը հաճախ դրսևորվում է աստիճանաբար. օրինակ՝

ուսուցիչների նախնական կրթության փոփոխությունների ազդեցությունը կարող է տեսանելի դառնալ տասնամյակներ անց, իսկ վաղ մանկության և տարրական կրթության ներդրումների ազդեցությունը՝ մոտ մեկ տասնամյակ անց: Հետևաբար, այսօրվա կրթական արդյունքները զգալիորեն կրում են նաև նախորդ տասնամյակներում ձևավորված համակարգի ազդեցությունը, և տարիներով կուտակված բացթողումների ուղղումը պահանջում է ոչ թե կարճաժամկետ, այլ հետևողական և բազմամյա քաղաքականություն:

2. Որոշումների կայացումն ու իրականացումը նախատեսվում է գործող պետական քաղաքականության և Կրթության մինչև 2030 թվականը զարգացման ծրագրով սահմանված ժամանակացույցի շրջանակում: Մինչև 2026 թվականի ավարտը շարունակվելու է արդեն մեկնարկած բարեփոխումների իրականացումն ու զարգացումը, իսկ հաջորդ՝ 2027–2030 թվականների փուլում աշխատանքները կիրականացվեն սահմանված նոր առաջնահերթություններին համապատասխան՝ ապահովելով դրանց համակարգված և հետևողական իրականացումը:

3. Հանրակրթության որակի բարձրացման հիմնական ուղղություններն են նոր պետական չափորոշչի լիարժեք և որակյալ ներդրումը, գնահատման համակարգի զարգացումը, ուսուցիչների մասնագիտական գնահատված կարիքին համապատասխան աջակցության տրամադրումը, ցածր արդյունք ունեցող դպրոցների նկատմամբ տարբերակված մոտեցումը, խթանումը, տվյալահեն կառավարումը և անվտանգ կրթական միջավայրի բարելավումը: Այս ուղղությունների համադրումը պետք է ապահովի ոչ միայն արդյունքների արձանագրում, այլև ուսումնառության բացերի բացահայտում և նպատակային միջամտություն:

4. Առանձին նոր ճանապարհային քարտեզի անհրաժեշտությունը պետք է որոշվի գործող ռազմավարական և ծրագրային փաստաթղթերի, դրանց կատարման արդյունքների և առկա տվյալների վերլուծության հիման վրա: Միաժամանակ, անկախ առանձին նոր փաստաթղթի ընդունումից, կրթության որակի բարելավման միջոցառումները բխում են չափելի արդյունքային ցուցանիշներից:

5. ՀՀ կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի N 1150-Ն որոշմամբ նախատեսվել է ցածր կատարողական ունեցող հաստատություններին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու մեխանիզմ, որը կգործարկվի 2027 թվականի հունվարի 1-ից: Աջակցությունը պետք է ներառի նաև ուսումնառության բացերի վերլուծություն, նպատակային մասնագիտական և մեթոդական աջակցություն, կառավարման կարողությունների զարգացում, սովորողների լրացուցիչ աջակցություն և արդյունքների վերլուծություն՝ ներառյալ նույն որոշմամբ, կրթության կառավարման տեղեկատվական համակարգով և ոլորտային ծրագրերով իրականացվող միջոցառումները, որոնց ուղղությամբ դպրոցների անձնակազմը ստանում է մասնագիտական շարունակական աջակցություն:

6. Ֆինանսավորման արդյունավետությունը գնահատում է ինչպես ներդրված ռեսուրսներով, այնպես էլ դրանց արդյունքում փոխված գործընթացների և ստացված արդյունքների հիման վրա՝ «ռեսուրս–գործընթաց–արդյունք» տրամաբանությամբ: Այդ նպատակով պետական բյուջեի աճը կապված է նաև արդյունքահեն կառավարման և

ֆինանսավորման մեխանիզմների, այդ թվում՝ բարձր և ցածր կատարողական ունեցող դպրոցների նկատմամբ տարբերակված մոտեցման հետ:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ ներկայում մշակվում է ՀՀ կառավարության նոր հնգամյա ծրագիրը, որի շրջանակում կրթության ոլորտը դիտարկվում է որպես մարդկային կապիտալի զարգացման, երկրի երկարաժամկետ մրցունակության և կայուն զարգացման առանցքային ուղղություն: Հետևաբար, կրթության որակի բարելավմանն ուղղված առաջիկա միջոցառումներն ու բարեփոխումները նպատակահարմար է դիտարկել նաև նոր կառավարության ծրագրի մշակման համատեքստում՝ դրանք փոխկապակցելով ոլորտի ռազմավարական նպատակների, ակնկալվող արդյունքների և չափելի ցուցանիշների հետ: Այս կերպ կրթության ոլորտում իրականացվող և նախատեսվող միջոցառումները ձևավորում են փոխկապակցված քաղաքականություն՝ ուղղված ոչ միայն կոնկրետ ուսումնական տարվա կրթական արդյունքների բարելավմանը, այլև կրթական համակարգի երկարաժամկետ արդյունավետության, սովորողների ուսումնառության արդյունքների և կրթության որակի կայուն բարձրացմանը:

X_____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

/Ժամանակավոր պաշտոնակատար/

Կատ.՝ Հանրակրթական և արտադպր. կրթ. քաղաք. մշակման և վերլուծ. բաժնի գլխավոր մասնագետ Անի Խաչատրյան, հեռ.՝ 010599699(519):
Տեղեկատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ Նարե Հովհաննիսյան, հեռ.՝ 010599699(612):